**ՆԱԽԱԳԻԾ 3Ն**

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2020 – 2024 ԹԹ-Ի ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով.

Հաստատել Լուսաղբյուր համայնքի զարգացման 2020-2024թթ-ի հնգամյա զարգացման ծրագիրը, համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ



Scanned by CamScanner

ՆԱԽԱԳԻԾ **4-Ա**

# ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝

Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լուսաղբյուր համայնքի 2020թ. տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ



Scanned by CamScanner

**ՆԱԽԱԳԻԾ 5**

# ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Լուսաղբյուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 8-Ա որոշմամբ հաստատված կարգի 16-րդ, 16.2-րդ կետերով հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 2020 հունվարի 30-ի թիվ 1 եզրակացությունը՝
Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է՝

1.Բարելավել համայնքի բնակիչների դիմումները համայնքի բյուջեից համայնքի նորածին երեխաների ծնողներից մեկին, համայնքի մահացած բնակիչների հարազատներին, սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ



Scanned by CamScanner